լով պատիւս Հայկա Նախնոյն մերոյ՝ թագաւորելով 'ի վերայ տանն Արարատայ աւելի կամ պակաս իբրև երեք հազար ամս. այլ որովհետև որ այժմոյս եղև չորս հարիւր ամս, որում ոչ ոք 'ի սերնդոց 'ի վերն ասացելոց իշխանաց ոչ ելան 'ի խնդիր ազգին Հայոց և 'ի տանն Արարատեան, որ ամայի մնալով ընդ իշխանութեամբ այլ ազգաց՝ կայ և մնայ մինչև ցայսօր. ուրեմն բարիոք լինի ազգին Հայոց զի այժմոյս երկայնամտութեամբ տարածեսցէ միտս իւր 'ի վերայ յանցանաց անցելոյ ժամանակին, և միտս առնուցու անհուն վնասն որ եկն 'ի վերայ աշխարհին, և ազգին Հայոց՝ պատճառն ինքնակալ թագաւորութեամբ և ինքնակալ իշխանութեամբ, և ինքնակամ արարմանց որ երբեմն եթէ հանդիպեցաւ վիճակս թագաւորութեան արանց բարեաց։ Օգուտն մեր ոչ եղև յաւելի քանթէ կալ և մնալ մեզ ծառայ նմայ. նաև ժամանակ ընդ ժամանակս, ըստ համեմատութեան փոփոխական բնութեանս մարդոյ՝ նեղեցաք 'ի նմանէ յոյժ, և անդրադարձն՝ եթէ վիճակ թագաւորութեան հանդիպեցաւ արանց չարեաց և անմտաց, իշուցին մեզ 'ի պատուոյ և երջանկութենէ ազատութեան մինչև 'ի խոնարհ, և վասն միայնոյ այս մեղաց ոչ միայն խոնարհ մեզ արարին յոյժ, այլ գերի այլ ազգաց նախատինք մարդկանց և արհամարհանք տեսողաց մերոց, և որպէս ոչ գոյ այսօր ոչոք